Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի թվային գրագիտություն և համակարգչային գիտություն, ինֆորմատիկա (9 դասաժամ), մայրենի (8 դասաժամ), աշխարհագրություն (8 դասաժամ), կերպարվեստ (2 դասաժամ), երաժշտություն (2 դասաժամ) և տեխնոլոգիա (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին::

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փատաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 27–ից մինչև հոկտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 – ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին,** Կոտայքի մարզի Զառի Ժ.Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Զառ, Դպրոցականների 2: Տեղեկությունների համար զանգահարել՝ /098/ 03-00-35 հեռախոսահամարով: